ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N-8

ԵՊՀ ԻՄ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

18.05. 2019թ. ք. Իջևան

Նախագահ՝ Գ. Ավետիսյան
Քարտուղար՝ Ա. Ալեքսանյան

Խորհրդի նիստին մասնակցում էին 16 անդամից 11-ը:
Բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Օրակարգ

1. Ավարտական կուրսերի քննաշրջանի և երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփում /Զեկ. Գ. Ավետիսյան/:
2. Ֆակուլտետի ավարտական աշխատանքների նախապաշտպանության արդյունքների ամփոփում /Զեկ.Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան /:
3. Ֆակուլտետի մասնագիտությունների ուսամնական պլանների քննարկում և հաստատում/ 2019-2023/ /Զեկ. Ա. Սարիբեկյան, Ա. ՈՒլիխանյան/:
4. Ընթացիկ հարցեր

   4.1. 2018-2019 ուս. տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքներ /զեկուցող՝ Գ. Ավետիսյան/:

   4.2. Ուսումնական խորհրդատուի տարեկան հաշվետվություն/ զեկուցող՝ Ս. Սաֆարյան/

1. Լսեցին- Ավարտական կուրսերի քննաշրջանի և երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփման մասին: /Զեկ. Գ. Ավետիսայն/

Գ. Ավետիսայնը նշեց, որ 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացները կազմակերպվել են ժամանակացույցին համապատասխան՝ տնտեսագիտության ֆակուլտետում ապրիլի 8-13-ը: Տոմսերը, թեստերն ու տարբերակները, որոնք ստուգվել և հաստատվել էին ամբիոնի վարիչների կողմից,

նախապես հավաքագրվել, ծրարավորվել և կնքվել էին ֆակուլտետի և ՈՒՄՎ-ի կողմից:

Գ. Ավետիսյանը նշեց, որ կազմակերպչական առումով նախորդ կիսամյակի համեմատ կար մի փոքր առաջընթաց: Ֆակուլտետում քննությունները և ստուգումները իրականացրել են դասավանդող դասախոսները, բացառությամբ 2 քննական պրոցեսի, որը կազմակերպվել է համապատասխան ամբիոնի կողմից:

Ֆակուլտետում II կիսամյակի առաջին ընթացիկ քննություններին և ստուգումներին մասնակցել են 74 ուսանող / ֆինանսներ, տնտեսագիտություն ԿԾ 49, Զբոսաշրջություն, սերվիս ԿԾ 25 ուսանող/, իսկ IV կուրսի 33 ուսանող հանձնել են առանց ընթացիկ գնահատման քննությունները: Ընթացիկ քննությունների միջին ցուցանիշը 2,68 է, ընթացիկ ստուգումների միջին ցուցանիշը 5,92 է: Արդյունքները քնարկվել է ուսանողների հետ, գրավոր բողոք չի ներկայացվել:

Արտահայտվեցին.- Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը

Արտահայտվողները նշեցին, որ ամբիոնների և դեկանի հետևողական համատեղ աշխատանքների արդյունքում որևէ խոչընդոտ չի առաջացել:

Որոշեցին.- Ավարտական կուրսերի քննաշրջանի և երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքները ընդունել ի գիտություն:

2. Լսեցին- Ֆակուլտետի ավարտական աշխատանքների նախապաշտպանության արդյունքների ամփոփում /Զեկ.Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան /:

Լսեցին- Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ Մ. Միքայելյանին

Մ. Միքայելյանը ներկայացրեց ավարտական աշխատանքների նախապաշտպանության արդյունքները: Նա նշեց, որ ուսանողի կողմից բակալավրի ծրագրի ելքային կրթական արդյունքներին համապատասխան մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը հաստատվում է ավարտական աշխատանքի կատարումով և պաշտպանությամբ: Այդ իսկ պատճառով կարևոր է ավարտական աշխատանքների նախապաշտպանության կազմակերպումը և անցկացումը: Մ. Միքայելյանը նշեց, որ ապրիլի 29-ին անց է կացվել ավարտական աշխատանքների նախապաշտպանություն: Ավարտական աշխատանքների ղեկավարները համաձայն հաստատված գրաֆիկի կատարել են խորհրդատվություններ և այս պահի դրությամբ ուսանողների մեծ մասի աշխատանքները ժամանակացույցին համապատասխան են ընթանում, իսկ որոշ ավարտական աշխատանքներում առկա են տեխնիկական թերություններ, որոնք անհրաժեշտ է վերացնել մինչև մայիսի 10-ը: Ամբիոնի վարիչը նշեց, որ համաձայն մասնաճյուղի կողմից սահմանված կարգի ավարտական աշխատանքները, ղեկավարի գրավոր կարծիքի առկայությամբ ենթակա են գրախոսման: Գրախոսման համար տրվում է ոչ ավել, քան 10 օր: Գրախոսությունը ստանալուց հետո չի թույլատրվում աշխատանքի մեջ փոփոխություններ կատարել:

Լսեցին.-Սերվիսի ամբիոնի վարիչ Գ Հովհաննիսյանին

Ամբիոնի վարիչ Գ. Հովհաննիսյանը ներկայացրեց, որ «Սերվիս» մասնագիտության ավարտական աշխատանքների նախապաշտպանությունը անց է կացվել ժամանակացույցին համապատասխան /ապրիլի 20-ին/: Նախապաշտպանությունը անցկացվեց ֆակուլտետի տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի, կրթական ծրագրի պատասխանատուի և ավարտական աշխատանքների ղեկավարների մասնակցությամբ, որը հնարավորություն տվեց առկա խնդիրներից շատերը լուծել տեղում: Նախապաշտպանության ընթացքում համարյա բոլոր ուսանողները վերջնական տեսքով ներկայացրին և պաշտպանեցին իրենց աշխատանքները. որոշ աշխատանքներում հիմնական թերությունները կապված էին ներածության, եզրակացությունների և քարտեզների կազմման հետ: Բոլոր ուսանողներին հնարավորություն տրվեց ամբիոնից ներկայացնել իրենց աշխատանքները: Անհատապես բոլորին նշվեցին աշխատանքներում առկա թերությունները և տրվեցին դրանց վերացման սկզբունքները :

Որոշեցին- Ֆակուլտետի ավարտական աշխատանքների նախապաշտպանության արդյունքների հիման վրա հանձնարարել ուսանողներին մեկ շաբաթյա ժամկետում շտկել ավարտական աշխատանքներում առկա բոլոր թերությունները և ներկայացնել ամբիոններ:

3. ***Լսեցին.- Ֆակուլտետի մասնագիտությունների ուսումնական պլանների քննարկման և հաստատման մասին/ 2019-2023// Զեկ. Ա. Սարիբեկյան, Ա. Ուլիխանյան/***

Ա. Սարիբեկյանը ներկայացրեց 2019-2023 թթ. ուս.տ-ի «Բակալավրիատի ուսումնական պլանը», որը կազմվել է 2018 – 2022 թթ. ուս. տարվա պլանի հիման վրա, որոշակի փոփոխություններով: Փոփոխությունները կատարվել են դասախոսական անձնակազմի, ուսանողների հետ քննարկումների, բեչմարկինգի և «Բակալավրիատի ուսումնական պլան»-ին ներկայացվող նորմատիվների հիման վրա: Նա նշեց, որ այդ փոփոխությունները կբարելավեն ուսման որակը և կնպաստեն ուսանողների հետաքրքրվածությանը դեպի մասնագիտությունը: Ա. Սարիբեկյանը նշեց նաև, որ երկրորդ մասնգիտական պրակտիկան հնարավորություն կտա ձեռք բերել գործնական հմտություններ, ստեղծել տեղեկատվական բազա և կողմնորոշվել նախադիպլոմային մասնագիտական պրակտիկայի վայրի ընտրության հարցում:

Ա. Ուլիխանյանը նշեց, որ «Զբոսաշրջություն» մասնագիտության ուսումնական պլանում /2019-2023/ 2018-2022 ուսումնական պլանի համեմատությամբ կատարվել են դասընթացների ժամաքանակների որոշակի փոփոխություններ՝ ելնելով

դասընթացների կարևորությունից և որոշ հարակից դասընթացներում կրկնություններից խուսափելու նպատակով: Նա ներկայացրեց կատարված փոփոխություններ որոշ առարկաների գնահատման ձևում:

Որոշեցին - Հաստատել ֆակուլտետի «Ֆինանսներ» և «Զբոսաշրջություն» մասնագիտությունների 2019-2023 ուս. տարվա ուսումնական պլանների նախագծերը և ներկայացնել մասնաճյուղի գիտական խորհրդի հաստատմանը:

4. Ընթացիկ հարցեր.

4.1 Լսեցին- 2018-2019 ուս. տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների մասին /զեկուցող՝ Գ. Ավետիսյան/

Գ Ավետիսյանը ներկայացրեց երկրորդ կիսամյանի գրաֆիկը: Նա նշեց, որ Տնտեսագիտության ֆակուլտետում ս/թ հունիսի 1-8 կազմակերպվելու է II կիսամյակի II ընթացիկ քննությունները և ստուգումները, ստուգարքները, ուսումնական և արտադրական պրակտիկաները: Ընթացիկ քննությունների, ստուգումների, երկրորդ կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցերը սահմանված ժամկետում ներկայացվել է ՈՒՄՎ, քննարկվել՝ դասախոսների և ուսանողների հետ: Ֆակուլտետի երկու մասնագիտությունների գծով նախատեսված է.

Ընթացիկ քննություն	15, որից 4-ը այլ ամբիոններից
Ընթացիկ ստուգում	15, որից 2-ը այլ ամբիոններից
ստուգարք	15
ուսումնական պրակտիկա	2 /Զբ 1,2/
արտադրական պրակտիկա	1/սերվիս 3/

Գ. Ավետիսայնն արժևորելով ամբիոնների կատարած աշխատանքները նշեց, որ ամբիոնների կողմից կիսամյակի սկզբում ուսանողներին տրամադրել են բոլոր հարցաշարերը, 12 շաբաթվա կտրվածքով ուսումնասիրել են դասընթացների կատարողականը, սահմանվել է տոմսերը ամբիոն ներկայացնելու և ծրարավորելու վերջնաժամկետ:

Որոշեցին- 2018-2019 ուս. տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքները գնահատել բավարար:

4.2 Լսեցին- Ուսումնական խորհրդատուի տարեկան հաշվետվություն / զեկուցող՝ Ս. Սաֆարյան/

Ս. Սաֆարյանը ներկայացրեց «Տնտեսագիտություն» ֆակուլտետի «Ֆինանսներ» և «Զբոսաշրջություն» մասնագիտությունների 2018-2019 ուս. տարվա ԵՊՀ ԻՄ–ում ուսումնական խորհրդատուների գործունեության կանոնակարգին, աշխատանքային պլանին համաձայն կատարված աշխատանքները: Մասնավորապես նշեց, որ ուսումնական տարվա սկզբին առաջին կուրսի ուսանողներին ներկայացվել է ԵՊՀ ԻՄ բակալավրի ուսումնական գործընթացի կազմակերպման, զեղչերի տրամադրման, բողոքարկման կարգերին և այլն: Կուրսի ավագներին ծանոթացրել է մատյանների վարման կարգին, ժամանակին իրականացվել է պայմանագրերի կնքման և ստուգարքային գրքույկների տրամադրման կազմակերպչական աշխատանքները: /Հաշվետվությունները կցվում են/

Արտահայտվեցին - Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը

Արտահայտվողները նշեցին, որ Ս. Սաֆարյանը պատշաճ կատարել է իր առջև դրված բոլոր հանձնարարությունները: Նա ոչ միայն արհեստավարժ իրականացրել է իր պարտականությունները, այլև բարյացակամ վերաբերմունք է ցուցաբերել բոլոր ուսանողների նկատմամբ: Ուսումնական խորհրդատուն տիրապետում է մասնաճյուղում գործող կանոնակարգերին և հմտորեն համակարգործակցում է ուսանողների հետ, ուստի առաջարկեցին հետագայում այդ պարտականությունները կրկին իրականացնի Ս. Սաֆարյանը:

Որոշեցին - Տնտեսագիտության ֆակուլտետի «ֆինանսներ» և «Զբոսաշրջություն» մասնագիտությունների առաջին կուրսերի ուսումնական խորհրդատուի աշխատանքները գնահատել բավարար:

Գիտական խորհրդի նախագահ	*Գ. Ավետիսյան*
Քարտուղար	*Ա. Ալեքսանյան*